ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2025 թվականի թիվ 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն և 405-Ն որոշումներով և հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 26-ի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի թիվ 877 հրահանգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարի 2024 թվականի օգոստոսի 7-ի հրահանգը, 2025 թվականի ընթացքում 16 տարին լրացող, ինչպես նաև ավագ տարիքի և սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած արական սեռի քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքները կազմակերպված անցկացնելու նպատակով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարին.

1) Կցագրման աշխատանքների նախապատրաստումը և անցկացումը տարածքներում իրականացնել 2025 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն և 405-Ն որոշումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարի 2024 թվականի օգոստոսի 7-ի հրահանգի պահանջներին համապատասխան,

2) կցագրման աշխատանքների ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամիսը մեկ գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզպետի աշխատակազմ, իսկ կցագրման ավարտից հետո 10-օրյա ժամկետում արդյունքների մասին ներկայացնել զեկուցագիր,

3) մարզպետի հաստատմանը ներկայացնել 2009 թվականին ծնված պատանիների զինծառայության նախապատրաստման աշխատանքների պլանը,

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարիատ չներկայացած և զինվորական հաշվառումից խուսափող (այդ թվում նաև ավագ տարիքի) քաղաքացիների ցուցակները ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզի տարածքային բաժիններ՝ վերջիններիս կողմից համապատասխան որոնողական աշխատանքներ կազմակերպելու նպատակով:

2. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին.

1) ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ենթակա բուժհաստատությունների կողմից կցագրման ենթակա պատանիների ամբողջական հետազոտման աշխատանքները սահմանված կարգով իրականացնելու համար,

2) կցագրման ընթացքում հայտնաբերված հիվանդ, բուժման ենթակա պատանիների բուժումը կազմակերպել այնպես, որ նրանք մինչև զորակոչը լինեն պիտանի ծառայության:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին.

Հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համագործակցելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարիատի հետ կցագրման աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու նպատակով:

4. Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետին.

Համայնքների ղեկավարների և զորակոչով զբաղվող համայնքային ծառայողների հետ աշխատանքներ տանել՝ կցագրման ենթակա պատանիների ցուցակները սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Տավուշի մարզի զինվորական կոմիսարիատ ներկայացնելու ուղղությամբ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վիկտոր Աբազյանին:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-02-26 09:08:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ք. Իջևան
2025թ. փետրվարի 25